

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻՋԻՆ ԳԱՐԵՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԻ ԶԴՏՈՒՄՆԵՐՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

(Շարունակութիւն և վերջ),

Գրիգոր Տուտէորդին խոնարհութեամբ է սկսում իւր պատասխանը, փառաբանելով իւր վեհագոյն պետին, իբրեւ յաջորդի ս. Գրիգոր Լուսաւորչի: Նա ուրախանում է, լսելով որ իւր Հայրապետն առողջ է, ընդ նմին բարեմաղթում է նորան երկար կեանք և պարծանս եկեղեցւոյ: Բայց որովհետեւ ինքն ստիպուած է այդ նամակով խորհուրդներ տալ և ըստ երևոյթին գիտէր, որ փոքր ինչ թունդ էր դուրս գալու իւր պատասխանը՝ յիշում է Քրիստոսի օրինակը թէ խոնարհութեամբ պէտք է լսի Գրիգոր Տշայ, քննութեանոյր զգրեալսն և ընդունէր անօրինաբար: Սակայն և այնպէս չէ մոռանում շեշտել որ խորհրդատուութիւնը համարձակ բնաւորութիւն ունի՝ դէպի ճշմարտութիւն ձգտելով:

Տուտէորդին վշտանում է որ Գրիգոր տղան դժգոհ է նորանից, թէ ինչո՞ւ չպէտք է անձամբ գնայ Հռոմկլայ, վասն զի եթէ որ և իցէ քաղաքական հանգամանք արգելք է եղել՝ դեռ այդ չէ նշանակում թէ ինքն ստունգանել է Հայրապետական իշխանութեան, քանի որ մշտապէս հնազանդ է եղել և ամեն հարկ ու պարտիք վճարել լուծութեամբ: Նա մինչև անգամ իրաւացի է համարում ղինքն՝ զայրանալու, որ իւր հոգեւոր պետը մտքովն իսկ անցնում է՝ թէ իւր ստորագրեալները կաշեն անհնազանդ



գտնուիլ: Կապակցութիւնը չի լինիլ միայն տեսնելով, որովհետեւ ամենասերտ կապակցութիւնն ունինք Քրիստոսի հետ, չնայելով որ նա մեզնից ոչ ոքից չէ տեսնուած...: Այդ յարաբերութեան է նմանեցնում և իւր ու Հայրապետի կապակցութիւնը, վասն զի այդ հոգւոր է և ոչ մարմնաւոր. հոգով պէտք է լինի հնազանդութիւնը, հոգով և գերիշխանութիւնը. սակայն այդ գերիշխանութիւնն ու հնազանդութիւնը հիմնովին բարեկամաբար պէտք է լինին: Սատ և բռնութիւնը միայն անխրատների համար է, մանաւանդ նոցա համար, որոնք չգիտեն թէ եկեղեցու մէջ «ամենայն իշխանութիւն Սատուծոյ է» և անհրաժեշտ է հնազանդուիլ նորան, ի հարկէ միայն հաւատարմութեամբ դէպի Հայաստանեայց ս. եկեղեցին, որ վեր է ամենայն իշխանութիւնից: Նա հասկացնում է այս ամենը կաթողիկոսին, յիշելով և պատճառը, թէ նորա նուիրականներն են յաճախ սուտ լուրեր հաղորդում՝ պղտորելու համար իշխանութեան յարաբերութիւնները. դրա «որոյ ստութիւն ի լեզուին և շոգ յերեսան» անշուշտ իւրեանց օգուտն են ունեցել ի նկատի և «կամին զխռովութիւն տանց եկեղեցւոյ»: Վասնորոյ և զգուշացնում է Հայրապետին՝ տեղիք չտալ գժտութիւնների իւր հօտի մէջ: Ընդ նմին և յիշեցնում է ոչ միայն իւրեանց հաւատարմութիւնն, այլ և այն՝ որ ամենից վեր է, այն է՝ յաղթական սրբերին. «տեսցես իմացական մասը զսոսա լինել քեզ յառաջագահ ի մարտս և ի թիկնապահի վերջս, վահան և սաղաւարտ, և սուր յաղդեր յարհաւրաց գիշերոյ...»: Դոցա հետ շնչողը կլինի ամուր և արի:

Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ դառնում է բուն խնդրին. ինքն իբրեւ հին փորձուած անձն՝ բոլորովին աւելորդ է համարում բանակցութիւն անել Հռոմոց հետ, առաջին՝ որ զուր աշխատանք է և երկրորդ՝ որ ժողովուրդը գայթակղւում է, ինչպէս անձամբ իսկ ստուգել է: Շատ մեծ ուրախութիւն է համարում Գրիգոր Տղայի գործունէութեան սկիզբներն, երբ թունդ պաշտպան էր հանգիստնում Հայաստանեայց եկեղեցու և արիաբար պատասխանում հակառակներին. և այդ համարում էր մեծ պարծանք ազգի համար: Սակայն ցաւում է որ սորանով չէ վեր-



ջանում իւր խօսքը՝ մանաւանդ որ չգիտէ այն թուղթն որ գրուած է Գրիգոր Տղայից առ Մանուէլ կայսրը<sup>1</sup>։ Այստեղ յիշում է և մի կէտ, որ շատ նշանաւոր է մեզ համար՝ այն է՝ որ արեւելեան վարդապետները բնաւ չգիտէին թէ ինչ էր կատարւում կաթողիկոսի շուրջ՝ մինչև անգամ ս. Շնորհալու ժամանակ, չգիտէին և Գրիգոր Տղայի գործերը, միայն թէ ձայնը լսելով՝ խորհուրդ էին տալիս «խորշել ի բաց գալ՝ որով և է պատճառանաւ»։ Ուստի և տխրում է Տուտէորդին՝ որ այն ժամանակները միասին չէր կատարւում գործն, իսկ այժմ՝ վերստին դիմում են գործակցութիւն խնդրում։ Տուտէորդին թերեւս չէ հասկացել Գրիգոր Տղայի նամակը, թէ քաղաքական նպատակով է սկսել այդ բանակցութիւնը, որպէս զի մի կերպ բարեկամութիւն մոցներ և յետ մղէր կայսրների բարբարոսութիւնները Հայոց միջից։ Սակայն հաւանական է և այս, որ նա հասկացել է, այնուհանդերձ հակառակում է, վասն զի Հայոց եկեղեցու գործը չէր քաղաքագիտութեան մէջ մտնելու։ Հաւատքի և հոգեւոր գործերի հետ խաղալ չի լինիլ, որպէս կ'երեւի և ստորեւ։ Այդ ճշմարիտ է՝ մանաւանդ եթէ ի նկատի ունենանք Բիւզանդի պատմութիւնը, նոյն իսկ դոցա հաւատակցութիւնը մեծ կորուստ կլինէր Հայոց ազգին և ոչ մի օգուտ չէր բերիլ ժողովրդի բարեկեցութեան համար, քանի որ վատութիւն և անբարոյականութիւն է ազգային անհատականութիւնը զօհել ժամանակաւոր բարօրութեան։ Բայց Տուտէորդին ցոյց է տալիս, որ հաշտուելու տեղիք անգամ չկայ, որովհետև անչափ մեծ են Հռոմոյց առաջարկութիւններն, այնպէս որ հաշտուել՝ նոյն էր թէ «ոտը փորոտով և մազովն հանդերձ՝ տալ զգլուխն ի ձեռս նոցա . . .» և ի՞նչ միութիւն կլինի, որ և իցէ աւանդութեան միարարութիւն, եթէ քրիստոնէութեան հիմնադրի անձի վերաբերմամբ հաւատքի մէջ տարաձայնութիւն է լինելու, մինչդեռ այդ հաւատալիքի մէջ ևս շեղուիլ՝ նոյն է թէ կործանել ամբողջ քրիստոնէութիւնը, քանի որ գործ հետ կապուած է և մի սոսկալի հարց — ուղղափառ է ի՞նչ

1. Տե՛ս. իմ յիշուած գրութեանս մէջ այդ մասին էջ 185—



և փրկուել ենք՝ թէ ուղղափառ չէ՞նք և չէ՞նք փրկուել. մէկ բնութիւն ասելով՝ առաջինն ենք հաստատում. իսկ երկու բնութիւն— երկրորդը, որ ամեն մի ճշմարիտ հայ կամաչէր և կզարհուրէր իւր վրայ առնելու և իւր նախնեաց հայհոյելու:

Ապա սկսում է Տուտէորդին ցոյց տալ հակառակորդների մոլորութիւնը, սակայն սխալւում է որ չէ ընդունում Գրիգոր կաթողիկոսի յառաջաբերած ազգային սկզբունքը թէ միայն մեր Հայրերն են մեր հաւատալեաց աղբիւրը: Տուտէորդին առաւել լաւ արած կլինէր՝ եթէ փոքր ինչ որոնէր նախնեաց գրութիւնները՝ նա կտեսնէր որ դոքա բաւականից շատ են ամեն պայքար առաջ տանելու համար և կհանդիպէր այն վեհապանծ սկզբունքին թէ օտար հայրերի գրուածներով միայն օտարների դէմ պէտք է խօսել: Գուցէ Տուտէորդին այս ի նկատի ունի՝ որ յիշարկում է նաև դոցա գրութիւնները, սակայն բառացի գոնէ չէ արտայայտում: Նա խառնում է դոցա ս. Գրքի աստուածային անձանց հետ և կարծում է թէ օտար հայրեր ասելով՝ ամիսովում են և մարգարէներն և առաքեալները, բայց օտար եկեղեցիների հայրերն ինչ կապ ունին ս. Գրքի անձանց հետ: Ս. Գիրքն ընդունել հրամայում է քրիստոնէութեան հիմնադիրը. մինչդեռ օտար եկեղեցիների հայրերի հրամանները կատարելու ոչ ոք չէ պատուիրել. երբ այդպիսի մի հրաման տուաւ զորօր. ս. Գրիգոր Ղուսաւորիչ և կամ նորա ժառանգներից ո՞րը, և ոչ մէկը: Ապա ուրեմն միայն Հայաստանեայց եկեղեցի է գրուած ճշմարիտ հայի սրտում և միայն Հայոց ս. հայրեր՝ նորա հոգեւոր զրօշակի վրայ: Հայաստանեայց եկեղեցու ս. Հայրեր են նոքա՝ որոնք աշխատել են նորա բարեգործութեան համար և որոնց բոլոր ասածներն ընդունում ենք անպայման, իսկ օտարներէից և ոչ մէկը չի կարող ունենալ այդ հեղինակութիւնը. բայց կարէ սուրբ համարուել ազատամիտ եկեղեցիների մէջ, վասն զի քրիստոնէութեան են եղել ախոյեաններ: Այլ թէ գիտենար այս ամենը նաև մեր ճոխաբան Տուտէորդին. սակայն նա խաբուել է Գրիգոր Տղայի հարցողական խոնարհութիւնից, կարծելով թէ հէնց իւր ասածներին է սպասում Հայոց Հայրապետը: «Աւզտը՝ մօտիկ արածում է, հեռուն նայում» ասում



է գեղեցիկ առածը. Տուտէորդին այս գէպքում հեռուն չէ տեսնում: մինչդեռ երբ ասում է, որ պէտք չէ պայքարի գուրս գալ Հռոմոց հետ՝ ճշմարիտ որ հեռուն է տեսնում և իրաւունք ունի պահանջելու ամեն հոգեւորականից, որ այդպիսի միաբարական արտայայտութիւններ չանեն ի ծաղր և ի ծանակ քրիստոնէական հաւատքի: Նորա այդ պահանջը մշտական է եղել, մշտական է և մշտական կլինի ամենայն մի բանիմացի համար: Եւ յերջապէս՝ միթէ դարաւոր ազգային եկեղեցին սեփականութիւն է մի կամ մի խումբ մարդկանց . . . :

Արդարեւ Տուտէորդին մի տեղ ևս իրաւացի է, երբ Ղիոսկորոսին և Տիմոթէոսին (գուցէ և Պետրոս թափիչին՝ որին և վեմ ու փակակալ է կոչում) բնութեան խնդրում պաշտպանում է, վասն զի դոքա հակաբազկեդոնականներ էին և ոչ հերետիկոս, որպէս ցոյց են տալիս Յունաց ժամանակակից գրութիւնները: մինչդեռ դարեր յետոյ սկսել են Յոյները դատապարտել դոցա և անուանարկել, որպէս զի իրեանց հակառակութիւնը արդարանար: Այս արդարացի ձգտման հետեւանք է, որ մեր նախնիք ի հեճուկս Յունաց մի շարական ևս գրել են և երբեմն երգել Ղիոսկորոսի վրայ, որ ամենաջերմ հաւատարիմն էր Կիւրեղ Ա. ղեքսանդրացու: Մանաւանդ որ եթէ նզովուին դոքա, կիսառաւորուին դոցա հակառակներն և «կծաղկէր տօմարն Լեոնի պողաբերելով զպտուլն մահաբեր»: Հռոմոց խորամանկութեան այս գէպքում մի երկասյրաբանութիւն էր, որով հեշտ պէտք է լինէր մոլորեցնել Հայոց, այսինքն երկու կողմերը նախ նզովել տալ ապա ցոյց տալ որ Հայոց ասածն ևս դոցանից մէկի նման է՝ ուրեմն և հետեւաբար նզովելի: Ահա թէ որտեղ էր հասնում նոցա հմտութիւնը: «Տես քաջ մոօք և ուսո՞ թէ առ ո՞ ունին զմիաբանութիւն, ասում է Տուտէորդին ոգորուած. բայց ուղիղ չէ ասում» թէ՞ առ չարն, ոչ հալածէին իբր ազգակից և համախոհ. ահա հալածեալ ի չարաց՝ գտանի առ բարիս . . . ուղիղ չէ, վասն զի ոչ ամենայն ոք, որ այդ խնդրում անգամ հալածւում է օտար եկեղեցուց, կարող է Հայոց միաբանակից համարուել. զորօր. Եւտիքէս, Նեստօր ևն. սակայն Տուտէորդին



շեշտում է «առ չարսն» խօսքն, ցոյց տալով թերևս, որ պէտք է դեռ քննուին թէ ինչի համար են հալածւում թէ և այդ խօսքերը զգոյշ արտայայտութիւններ չեն և չենք կարող թիւրիմացութիւնը վերացնել նորա կարծիքի հասկացողութիւններից: Ապա խրախուսում է կաթուղիկոսին. «եւ ի վերայ լերինն բարձու.... աւետարանիչք Սիոնի. ձգես՝ զձեռն քո ընդ արեւելս ..» որով յորդորում է կոպտական այդ անձանց խօսքերով զինուիլ. բայց որքան ազդու կլինէր, եթէ Տուտէորդին նոցա ուղղափառութիւնը պաշտպանէր և ապա յորդորէր որ դարձեալ մեր նախնեաց խօսքերով զինուի, գործածելով ի դէպ և կոպտերի և Ասորիների զէնքերն սուանձնապէս:

Այնուհետև սկսում է խօսել Քրիստոսի բնութեան խնդրի վրայ, վշտանալով թէ ինչու Գրիգոր Տղայ իւր մօտ եղած գոնէ իւր նախորդների գրութիւնները չէ աչքի անցկացնում և իւր տարակուսական կէտերի լուծումը խնդրում, կամ արեւելեան միւս վանականներին փոքր ինչ ուշադրութիւն դարձնելով՝ լսում: Զընայելով իւր այդ անբաւականութեան, որի արտայայտումը ծանր է թւում ինքեան, ինչպէս սկզբում շեշտում է, Տուտէորդին սկսում է Հայոց եկեղեցու վարդապետութիւնը մանրամասն յառաջադրել նոյն իսկ Ս. Գրքից սկիզբ առնելով: Գեղեցկապէս հաստատում է՝ որ Քրիստոսի բնութիւնը մէկ է և մէկ պէտք է դաւանել, սակայն միաւորեալ երկուսից՝ աստուածայինից և մարդկայինից՝ անշիւթ և անբաժան: Գորա համար բերում է մի շարք վկայութիւններ Հայոց քաջախրոխտ վարդապետների դեռ անտիպ գրուածներից, որոնք պարզապէս ապացուցում են այդ ս. դաւանանքը: Միանգամայն և նզովում է այն հերձուածողներին, որոնք այդ դաւանանքի հակառակորդներն են, որպէս Նեստոր, Եւտիքէս, Պօղոս Սամատացի և այլք:

Այս վերջացնելուց յետոյ Տուտէորդին չէ կարենում հաշտուել հակառակորդների հետ, նկատելով թէ ինչպէս կարելի է հաշտուել, երբ նոցա հետ մինչև անգամ իւրեանց մարդիկ, իւրեանց հայրերը չեն հաշտւում և հակառակում նզովում են նոցա: Նա ոչ մի տեղ չէ գտնում հակառակորդների դաւանանքը,



վասնորոյ և մի առ մի բերումէ բազմաթիւ վկայութիւններ նոցա ս. հայրերի գրուածներէց, որոնք բարձրաձայն խօսում են յօգուտ Հայոց դաւանութեան:

Ի վերջոյ ամփոփումէ Տուտէորդին իւր դաւանածն, և գորանով չէ շատանում, այլ յիշումէ վերստին որ անթիւ գրուածներ կան «յարկեզս աստուածաբնակ սրբարանաց մերոց, որք են կարող տալ պատասխանի՝ ընդդէմ հպարտացելոցն յոլորտուտ կարծեօք իմաստից...»: Ընդ սին յորդոր է կարգում առ իւր Վեհապետն առանց քաշուելու, վասն զի գիտէ՝ որ հարցը աստուածային եկեղացական նիւթերի վրայ է և ոչ թէ մասնաւոր աշխարհական, որոնց մէջ կայ բռնութիւն և կոյր հնազանդութեան պահանջ: Ասրճ կտրումէ որ եթէ հակառակորդները դաւանում են «ըստ հին գրելոցն, յայտնի են մեզ, որովք ատելութիւն կատարեալ ատեցաք. թէ ըստ նոր ծանուցելոցս ի ձէնջ, նոցին խոստովանութեամբք՝ բնաւ ոչ ընդունիմք, զի հօւր բարկութեան ծածկեալ է ընդ յարգի...»: Այլ ճանաչումէ միայն Հայաստանեայց եկեղեցու դաւանանքն և պաշտումն ասելով. «և մեք այսպէս ուսաք և կալցուք մինչև յաւիտեան. ոչ երկուցեալք ի ոպառնալեաց և ոչ պարսաւեալք փոքրաբան ագիտութեամբ: Հաւատովք բարձրացեալք իրր լեառն պարարտ, պատրաստ եմք մատուցանել զքանքարն տէրունի...»: Այդ հրաշաբան վարդապետը գորանով չէ վերջացնում իւր խօսքերը. նա ընդունումէ՝ որ Գրիգոր Տղան խոնարհութեամբ է իւրեանից խորհուրդ հարցնում սակայն և այնպէս յորդորումէ միայն աւետարանին, Քրիստոսին հետեւել. ոչ աթոռ որոնել և ոչ ամուր գղեակներ աշխարհական իշխանների նման, և ոչ նամակներ գրել, այլ գրնալ «հետիոտս յարեմոից մինչև յարեւելս, ընուլ դաւետարանն Քրիստոսի» նոցա «որոց ոչ ծագեաց ի նոսա լուսաւորութիւն փառացն Քրիստոսի», «ոչ շինելով ի վերայ այլոց հիմանց, այլ ուր ոչ անուանեցաւ Քրիստոս»: Իսկ այլ քրիստոնեաները թէ ճշմարիտ են, թող բաւականանան իւրեանց մէջ եղած քարոզութեամբ, թէ ոչ՝ պէտք է պատրաստ լինել պատասխան տալու նոցա, եթէ կամենում են զըջալ, ապա թէ հարկ կ'իլին՝ և գնալ նոցա մէջ և

առաջ «զմկրտութիւն լուսաւորութեան»։ Այս ասումէ, բայց գիտէ, որ այդպէս լինել չի կարող, «վասն զի չէ և չէ իսկ զի չէ Հոգի և ոչ նշանք առաքելականք, և ոչ առաքեալք ընտրեալք...»։

Այս գաղափարով միացած էր ամբողջ Մեծ Հայքը Աղուանքի հետ։

Այս նամակի պատասխանն է Գրիգոր Տղայի յայտնի թուղթն, որպէս երևում է պատասխանական կէտերի նմանութիւններից (տես. զորօր. էջ. 25 Վենետիկի տիպ)։ Միայն Գրիգոր Տղայ լաւ չէ հասկացել Տուտէորդու միտքը, վասնորոյ և յաճախ սխալ է բացատրում և հարուածում մինչև անգամ նորա Մովս խորեհային, երբայեցոց Մովսէսը համարելով (էջ. 28)։ Գրիգոր տղան պէտք է թերեւս ուրախանար Տուտէորդու հաւատարմութիւնից և քաջալերէր նորան. սակայն չենք կարող պնդել թէ այդ կհամապատասխանէր ժամանակի հանգամանքներին։

Գրիգոր Տղան իւր այդ նամակում վերստին շեշտում է իւր նպատակներն, որոնց մասին արդէն խօսել ենք։

Այժմ դառնանք առկախ մնացած խնդրին։

